

Ադբիւրի յաւելած

լոյս է տեսնում շաբաթը մի անգամ կիրակի օրերը

№ 10 կիրակի 16 մարտի | ութերորդ տարի 1897

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Աղբիւր-Տարազի պրեմիաներն են՝ 1) Միխայէլ Նալբանդեանի վերջին լուսանկարից պատրաստած մեծաղիր ֆոտօ-գլաւիւրը պատկերը, 2) *Մայրիկի անձրեւում*, մի շքեղ խրոմօ, 3) *Ոսկէ շղթաներում, կամ Հարեմի աղջիկը*, 4) Իւրաքանչիւր ամիս Պարիզի մոդեր, բացատրութիւններով։

ԱՂԲԻՒՐԻ տարեկան գինը 3 r. (առաքումով 4 r. կամ 12 ֆր.), ՏԱՐԱԶԻՆԸ 6 r. (առաքումով 10 r. կամ 30 ֆր.), ամսական Տարազը 50 կ. Աղբիւրը—25 կ. պրեմիաները ստանում է Աղբիւր-Տարազ միեւնոյն հասցեով գրող բաժանորդը, վճարելով եւ մէկ ռուբլի։
Հասցէն՝ Тифлисъ, редакція иллюст. жур. Агбюръ-Таразъ կամ Tiflis (Caucase) Réd. des jour. Agbur et Taraz.

Կովկասի Կառավարչապետ, Կովկասեան զօրքերի հրամանատար գեներալ ադիւտանդ իշխան

Գ. Ս. ԳՈԼԻՑԻՆ.

ԻՇԽԱՆ Գ. Ս. ԳՈԼԻՑԻՆ

Հինգ դարից աւելի է, որ Լիտովեան Գեդէման մեծ իշխանի շառաւիղ Գոլիցինները իրանց զինուորական, քաղաքագիտական նշանաւոր ծառայութիւններով ռուս պատմութեան մէջ փառաւոր էջեր են բռնում։ Սերնդից սերունդ այդքան դարեր անընդհատ ծառայութիւնը մեր լայնածաւալ Կայսրութեան մէջ՝ ապացոյց է արտակարգ խելքի, սրտի, որ իշխան Գոլիցինների տոհմին յատուկ է։

Մեր բարով-եկ իշխան Կառավարչապետ Գ. Ս. Գոլիցինը մասնաւորապէս, որ երկար տարիներ վարել է և պաշտօն Կայսրութեան ամենաբարձր հաստատութիւնների մէջ, Կառավարչական Սենատում և պետական խորհրդի մէջ, այնտեղ՝ ուր օրէնքը սերտ շաղկապած արդարադատութեան և ողորմածութեան հետ՝ սփռում է հզօր Արծւի թևերի տակ ապաստանած բազմացեղ ժողովրդին խաղաղութիւն, արդար աշխատանք, առաջադիմութիւն, քրիստոնեայ է խօսքիս լայն մտքով։ Սրան առհաւատչեայ են մանաւանդ Թագաւոր Կայսեր հարճրագոյն ուկազը, որով նա մեր իշխան Կառավարչապետին տալիս է աւելի ընդարձակ լիազօրութիւններ և Մայր Թագուհի-Կայսրուհի այն հրովարտակը, որով մեր նորընտիր Կառավարչապետին յայտնում է գորովագութ Մայր Կայսրուհին Իր գոհութիւնը նրա օրինակելի, ճնողի պէս տաճած հոգատարութեանց համար, որ նա ունեցել է Կայսրուհի Մարիայի հիմնարկութիւնների վրայ։

Տարազը ողջունելով Իշխան Կառավարապետ Գ. Ս. Գոլիցինի շնորհաբեր գալուստը՝ վստահ է, որ Նա բուն արիստոկրատին և ասպետին յատուկ անաչառութեամբ կառավարելով մեր բազմալեզու Կովկասը, կըզարգացնէ մեր երկրի մէջ բարին և գեղեցիկը։ Կըցանէ ժողովրդի մէջ համերաշխութեան և խաղաղութեան սերմեր, արմատախիլ անելով երբեմն լըսւող արկածախնդիր, զրպարտիչ ձայները, որոնք վերջին օրերս գալիս են այստեղից-այնտեղից։

ԹԷՈԴՈՐԱ *)

Պատմական վէպ Ի. Ֆիօրէնտինիի

(Շարունակութիւն)

XXV

ՊՐԻՍԿՈ

Ա՛ր քանի օրից յետոյ Թէոդորան վերադարձաւ Կոստանդնուպոլիս: Յուստինիանը անչափ ուրախ էր, տեսնելով իր կնոջը կատարեալ առողջ: Պիտիայի անցքը նրան հետևեալ կերպով էին յայտնել. իբր թէ մի անյայտ սրիկայ, խաբելով պահապաններին, մտել էր կայսրուհու սենեակները, ցանկանալով վիրաւորել նրան և թիկնապահները ժամանակին հասնելով, ձերբակալել էին սրիկային: Թէոդորան չէր վախենում, որ իր սուտը կբռնվի: Միակ մարդիկ, որ գիտէին բուն ճշմարտութիւնը, այդ իր սիրելի Անտոնինան էր և նախկին սիրահար Իմոնէն: Բայց առաջինը երբէք չէր համարձակվիլ դաւաճանելու կայսրուհուն, իսկ երկրորդը հազիւ թէ ցանկանար գալ Կոստանդնուպոլիս այն ընդունելութիւնից յետոյ, որ նա ունեցաւ Պիտիայում: Բայց խորամանկ Թէոդորայի սուր դիտողութիւնից կարողացաւ թագնուել կայսեր քարտուղար Պրիսկոն, որ ուրիշ կերպ էր նայում Պիտիայում կատարած անցքին, քան միւսները: Յամենայն դէպս Թէոդորան պարտական էր քարտուղարին այն կասկածի համար, որ ծագեց Յուստինիանի մէջ:

—Պատմիր ինձ, աննմանելի իմ Թէոդորա,—դարձաւ կայսրը մէկ անգամ իր կնոջը,—աւելի մանրամասն Պիտիայում կատարած անցքի մասին:

—Մի՞թէ արժէ խօսել նրա մասին,—անհոգ դէմք ընդունելով պատասխանեց Թէոդորան:—Ես քեզ արդէն յայտնեցի թէ ինչպէս պատահեց բոլորը, ուրեմն ինչու ես դարձեալ բարձրացնում միևնոյն հարցը:

—Ես ուզում էի մի քանի մանրամասնութիւններ իմանալ:

—Այո՞նքան:

—Թէ ինչպէս մի սրիկայ կարող էր մտնել քո սենեակը, թիկնապահների, ներքինիների, սպասաւորների, պալատական տիկինների և առհասարակ ամբողջ ուղեկիցներիդ աչքի առաջ, որոնք քեզ շրջապատում էին:

—Ի՞նչ գիտեմ: Ես կարծում եմ, որ պահապանները աչքից փախցրել են, կամ անպիտան սրիկային յայտնի է եղել որ և է դաղտնի ճանապարհ: Չըպէտք է մոռանալ, որ Պիտիայում, իմ ժամանակաւոր բնակութեան տեղը, պալատական պահապանները լաւ չէին կազմակերպած, ինչպէս այստեղ:

—Ի՞նչու չըհրամայեցիր, որ նրան տանջանքի ենթարկեն, այլ ուղղակի տարան արտասահման:

—Շատ հասկանալի պատճառներով: Նախ և առաջ ես չըցանկացայ լուրջ նշանակութիւն տալ այդ բոլոր չիմար պատմութեանը, այնուհետև տանջելու ժամանակ յանցաւորը կարող էր վիրաւորական խօսքեր ասել կայսերական մեծութեան վերաբերութեամբ:

—Այժմ բացատրիր ինձ, խնդրեմ, Թէոդորա, ինչպէս կարող էր յանցաւորը մտնել քեզ մօտ առաւօտը վաղ, արեգակի լոյսով, այն ինչ բոլոր այդ տեսակ յարձակումները դիշերով են կատարւում:

Այս հարցի համար Թէոդորան չէր պատրաստած. մէկ րոպէ լուռութիւն պահպանեց, բայց դա միայն մէկ րոպէ էր: Խորամանկ երեսպաշտը արագ բարձրացաւ տեղից, նրա աչքերը փայլեցին և նա աղաղակեց.

—Ի՞նչպէս կարող եմ իմանալ ես այն մարդու դիտաւորութիւնները, որ ինձ բոլորովին անծանօթ է: Ձեր հարցուփորձը ինձ վիրաւորում է: Դուք միշտ սիրել և յարգել էք ինձ: Եթէ քարտուղար Պրիսկոն ձեր մէջ կասկած է յարուցել իմ վերաբերութեամբ, ասացէք խնդրեմ, ես ինչ մեղաւոր եմ:

Յուստինիանը կնոջ բողոքից շւարած՝ լռել էր.

—Օ՛, ես լաւ եմ ճանաչում այն մարդուն, աւելի լաւ, քան թէ դուք: Նա ինձ արհամարում է և նրա նպատակն է ստորացնել ինձ ձեր առաջ: Ես մի արգելք եմ նրա փառասիրական դիտաւորութիւնների համար: Ձեզ կառավարելով, նա ուզում է ինքը լինել միայն լիազօր կայսր: Նա տեսնում է, որ դուք քիչ յարգանք, հաւատարմութիւն էք տածում դէպի ինձ և երբեմն լսում էք խորհուրդներս, հասկանալի է, որ այդ բանը նրան դուր չէ գալիս: Կրկնում եմ՝ նա առիթ է որոնում վայր դցելու ինձ ձեր առաջ: Ահա թէ ինչու նա կասկածներ է յարուցանում ձեր մէջ և աշխատում է նախանձ արթնացնել, բայց դուք, որ Աստծոյ պարգևած իմ ամուսինն էք, չըպէտք է ընկնէք այդ տեսակ ազդեցութեան տակ. բացի դրանից դուք պէտք է հեռացնէք վիրաւորողին:

—Ո՞ր վիրաւորողին:

—Ինչպէս թէ որ: Ի հարկէ Պրիսկոյին:

—Օ՛հ, ոչ, դուք սխալւում էք, բարեկամս. նա ինձ յայտնեց բոլորը, չըցանկանալով երբէք վիրաւորել ձեզ, նա հաւատարիմ մարդ է, որի մէջ, խոստովանած, ես մի քանի անգամ համոզել եմ: Ի՞նչու էք դուք ինձ ստիպում հեռացնելու իմ ամենախոնարհ ծառայողներից մէկին: Եթէ նա իրաւ ձեզ վիրաւորել է, ուրեմն դա նրա ցանկութեան հակառակ է եղել: Եթէ դուք ցանկաք, նա ձեզանից ներողութիւն կըխնդրի:

—Ո՛չ, ի սէր Աստծոյ, հեռացրէք: Այդ կեղտոտ մրջնւնի ներկայութիւնը մինչև անգամ վիրաւորանք է ինձ համար:

Ամուսինների բացատրութիւնը սրանով էլ վերջացաւ: Վերջին ժամանակներում, չընայելով Թէոդորայի դործ դրած ոյժերին՝ Պրիսկոյին հեռացնելու վերա-

*) Տես Տարազ № 8.

բերութեամբ, վերջինը շարունակ օգտւում էր Յուստինիան կայսեր կատարեալ հաւատարմութեամբ, ուստի Թէոդորան վճռեց ամենավճռական քայլ անել: Նա հրամայեց, որ կանչեն իր մօտ հաւատարիմ Ջուզեպպէին, որին և տւեց գաղտնի յանձնարարութիւն, նախապէս երդւեցնելով երիտասարդին, որ նա խստութեամբ կրկատարի:

Մի քանի օրից յետոյ, երբ կայսեր քարտուղար Պրիսկոն անհոգ զբօսնում էր ծովի ափին, մի խումբ դինւորաձ մարդիկ յարձակւեցին նրա վրայ, վայր ձգեցին նրան, կապեցին բերանը և գցեցին նաւի մէջ:

Ի՞նչ արին դժբախտ Պրիսկոյին, անյայտ է: Արդեօք ծովը ձգեցին կամ մի որ և է տեղ՝ արտասահման տարան, ոչ ոք չգիտէ: Մի քանի օր անցած այդ անցքից, Ջուզեպպէն ներկայացաւ կայսրուհուն և ասաց.

—Այլ ևս չըվախենաս Պրիսկոյից:

Յուստինիանը, որին պատմաբանները արդարացի կերպով համեմատում են Կլաւդիոս կայսեր, Մեսալինայի ամուսնու հետ, սկզբում մի քանի օր շարունակ հարցնում էր իր քարտուղարի մասին, բայց յետոյ ոևէս մոռանալ և վերջապէս մոռացաւ: Մի բան, որի մասին լաւ լիշում էր Յուստինիան կայսրը, այդ քարտուղարի մահից յետոյ մնացած փողերն էին, որոնց շտապեց դործադրելու Բիւզանդիոնի հրամանատարը:

Կ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑ

(Կըշարունակւի)

ՀԱՐԱՋԱՏՆԵՐ *)

(Քարեր Կ. Պոլսեցիների կեանքից)

II

ՏԻՐԱՆ ԲԷՅԻ ԱՊԱՐԱՆՔՈՒՄ

Երեկոյ էր. վերջալոյսի մօտերքը: Գաբաթաշի գագաթների բարձունքում, կիսազառիվայրի կիսաբլրաշաւիղ վրայ մի գեղեցիկ պարտիզում, գոյնզգոյն ապակիներով զարդարւած ճաշտնաձև քէօշկում՝ իրանց հայրենի տան հովանու տակ, հեռու մարդկային աչքերից և ականջներից, հեռու ընդհատողներից, նշմարողներից, ուրախակցող, ժպտացող կամ նախանձոտ, ծաղրող, արհամարողներից, երկու զոյգեր, Տիրան բէյը և նրա հոգեկից Բէաթրիչէն արձակ ու ազատ ընկղմած երանութեան մէջ՝ խօսում, ծիծաղում ու իրանց երջանկութեան շրջանի ծրագիրն էին կազմում: Պարտէզի ծառերի վրայ թռչկոտող թռչնիկները, իրանց թրթռացնող երգերով, կարծես ձայնակցում լինէին զոյգերի ուրախութեանը: Դալար կանաչ յատակը, կոկոններով և վարդերով զարդարւած փշալի թփերը, անուշահոտ ծաղիկների բուրմունքը, զեփիւռի մեղմ սօսափիւնը նոճիների և սօսիների մէջ, աւազանի շատրւանի ջրի կարկաչիւնի հետ միացած՝ մի սքանչելի ներդաշնակութիւն էին կազմում երկու սիրահարների անվերջ սիրաբանութեան կոնցերտին: Սոխակն անգամ, կարծես հրապուրւած լինելով այդ քաղցրահնչիւն համերգից, վարդի թփերի միջից իր գերիշխանական սօլօն էր արձակել և ներդաշնակութեան պսակը բոլորել: Եւ որքան արևը թեքւում էր, այնքան աստիճանաբար ուժեղանում էր այդ բնական համերգը, ցանկանալով յագուրդ տալ կրքերին, զգալով որ շուտով տիրելու է մութը և խաւարային թագաւորութիւնը իրան տխուր խարդաւանանքներով:

Այդ միջոցին մի յոյն աղախին տխրադէմ դուրս եկաւ տանից և ակամայ քայլերով սկսեց առաջ գնալ, ձեռքին մի այցետոմս բռնած: Աղախինն աչքերը յառած քէօշկի լուսամուտներին՝ գնում էր դողալով, տիրոջ բարկութեան դիմաւորելու սրտադողով: Եւ որքան առաջ էր գնում, այնքան թշւառի ծնկները դողում էին և քայլերը դանդաղում: Վերջապէս մօտեցաւ քէօշկին ու դուռը հրեց:

—Այդ դու ես, Էլէնա, ներսից ձայն տւեց մեղմաբար Տիրան-բէյը:

—Ներիր, բէյ, ես անճարացած յանձն առի խանգարել ձեր առանձնութիւնը: Աթա-բէյը ստիպեց այդ կատարել...

—Եղբայրս, ասաց Տիրանը, այցետոմսն առնելով աղախնի ձեռքից.

—Այո, ասաց աղախինը աւելի երկիւղածութիւնով:

—Տիրան, ասաց Բէաթրիչէն, կըխնդրեմ, գնա ներս բեր եղբօրդ և ինձ հետ ալ ծանօթացրու: Կաղաչեմ, լաւ առիթ է, քանի որ այսօր տանը չեն ծնողներդ:

—Այս րոպէիս, այս րոպէիս, ասաց դուրս գալով Տիրանը և դառնալով աղախնին շարունակեց. Էլէնա, շուտ այդտեղի լամպերը վառել տուր:

Մի երկու րոպէից վերադարձաւ Տիրանը եղբօր Աթայի հետ ձեռք ձեռքի բռնած, և մտան քէօշկը: Ծառաներն արդէն սկսել էին վառել ջահերը:

—Եղբայր, խնդրեմ ծանօթանաք ձեր հարսնացու Բէաթրիչէի հետ:

—Չատ ուրախ եմ, շատ ու շատ, ասաց թոթւելով Բէաթրիչէի ձեռքը, որն ուզում էր համբուրել տաքեր ձեռքը: Ներիր, քոյրս, շարունակեց Աթան, որ ես սպառականութիւնս չեմ կատարել, քեզ չեմ այցելել. այդ բոլորի մէջ լաւ իմացիր, որ ես մեղաւոր չեմ:

—Իսկ դուք, բէյ, ներեցէք, որ ես էլ չեմ կատարել իմ սպառականութիւնս. ես աւելի ևս մեղաւոր եմ.

—Ո՛չ, ո՛չ, դու ոչնչով մեղաւոր չես, աղջիկս, երբէք ալ մտքովս չի անցնիլ քեզ մեղադրել: Մեղաւոր է նշանածդ, Տիրանը, որը պատիւ չըհամարեց քեզ հետ այցելել իր եղբօրը և հարսին:

—Էհ, եղբայր, թող այդ քարերը, մի վրդովիր ինձ, խօ իմ սիրտս գիտես, ինչու՞ այլևս կասկածանքներ կըտածես դէպ ինձ:

—Գիտեմ, գիտեմ և գիտցածս ալ երբէք չեմ ծածկիլ: Եթէ եղբայրդ սիրէիր, գոնէ ոսպի մը չափ, ինձ պատահած ժամանակդ այնպէս խոյս չէիր տալ, ինչպէս սովորութիւնդ է:

—Եղբայր, եղբայր, զուր տեղ ինձ մի՛ ամբաստաներ Բէաթրիչէիս մօտ... Մի՛թէ իրաւացի են այդ ակնարկներդ:

—Այնքան ճշմարիտ, որքան որ ես եմ, եղբայրդ այս րոպէիս այդ բոլորը քեզ զրուցողը:

—Այդ, կատակներդ դուրեկան չեն:

—Քեզ նման հաճելի լեզւի տէր չեմ, ապա թէ ոչ

---

*) Տես Տարազ № 9.

Օրհասը հանդիպում է Իֆիգենիային. *Նկար Կաուլբախի.*

ես ալ դրաւած կըլինէի ծնողներիս սիրտը և այժմ նրանց դրկում նստած սպասելիս կըլինէի միլիոնին։

—Դուք արդէն հանաքի չափն անցուցիք. ինչպէս կընշմարեմ, եկել էք ինձ խայթելու, այն էլ հոգւոյս հատորի ներկայութեանը։ Բայց խնդրեմ սանձ դնէք ձեր լեզուին, զսպէք ձեր կրքերը, այդ նախատինքներին երբէք արժանանալու առիթ չեմ տւել։ Ես կրկասկածեմ որ դարձեալ ֆինանսական անձուկ մ'ունիք և հնչւած վիճակի մէջ եկել էք ձեր սրտի մաղձը իմ գլխիս թափելու։ Տարաբախտաբար վատ ժամ էք ընտրել։ Ասիսն որ ձեր կրքերուն կրզոհէք մի անմեղ արարած ևս, որ ոչնչով մեղաւոր չէ, տանելու այդ բորբոքումներդ։ Ես եղբայրդ եմ, հարազատ եմ, զիս չարչարանքիդ ընկերակից ընելու զուցէ իրաւունք ունենաս, բայց այս խղճալուն խնայէ։

—Ներողութիւն, օրիորդ, հազար ներողութիւն, այնպէս վրդովուած եմ եղբօրս դէմ, որ ջղերս սանձելու ոյժ չունեմ... Բայց վերջացրի լսելիքս, պրծայ։ Իսկ դուք ինչպէս էք, գոհ էք ձեր բախտէն։

—Չնորհակալ եմ, բէյ, անչափ շնորհակալ ձեր բարեսրտութենէն։ Վիճակէս տրտնջալու առիթ չունեմ... Բայց ես կրկնդրկեի, որ դուք պարզէիք ձեր վէճը, որպէս զի առիթ ըլլատահէր, մի ուրիշ անգամ այսպիսի անախորժ տեսարանի պատահելու։

—Այո, եղբայր, այո, Բէաթրիչէն արդարացի պահանջ դրաւ, պէտք է պարզել։ Քո խօսքերը անոր սրտի մէջ խոր արմատներ դցեցին և եթէ անմիջապէս չըպարզես, ապագայի մէջ ամեն տեսակ բացատրութիւններ չեն կարող ջնջել դրա հետքերը։ Կրկնդրեմ առանց այլ և այլի, ինչ որ ըսիր՝ կրկնիր, պարզիր և որոշիր. թող պատւոր լինի մեր մէջ Բէաթրիչէն կամ ուրիշ մը, ում որ կամենաս։

—Ինչ դատաւոր, ինչ բան, դու ինքդ խօսիր, դու ինքդ ըսա, դու ինքդ ալ վճռիր։ Պատճառն ինչ է, որ ծնողներս ինձ տեսնել չեն կամենար, իսկ քո մի ժամ անոնց աչքին հեւանալը սրտի բաբախում և անհանգստութիւն կըպատճառէ։

—Ձըղիտեմ ես, իսկ դու կարող ես բացատրութիւնը տալ. քանի որ այդ մասին երևի շատ ես մտածել և արդէն իսկ եզրակացութեան հասել, ասաց գլխակոր Տիրանը։

—Այդ ես գիտեմ, քու կեղծաւոր շողոքորդ լեզուդ է։ Ինչն է պատճառն որ ինձ ատելով ատում են, իսկ քեզ ընդհակառակը։

—Ապատ ես, այդ մասին ալ կայացրած վճիռդ յայտարարել։

—Ձեմ մերժել, այդ ալ քծնութիւնդ է։

—Բաւական է, եղբայր, բաւական է, խիղճ ունեցիր։

—Վատ կացութեան մէջ ես, ինչ է. նշանածդ քովդ է։ Խոստովանի՛ր, մի՞թէ դու չըզրդեցի՛ր, որ նրանք ինձմէ պայմանագիր առան, որ ես իբր հայրենի ժառանգութիւնս ամբողջապէս ստացայ և այլ ևս պահանջ չունեմ։ Ու մի՞թէ այդ բոլոր քու օգտիդ չէ կատարել։

—Յաւում եմ, որ այնքան հոգեկան ծանր ճնշման տակ ես, եղբայր, որ այդ աստիճանի ատորացել ես։ Մի պակասութիւն որ չունէիր՝ դրպարտել, ստել, այդ էլ քեզ նոր արհեստ ես շինել։ Չարբեցողութեան և շռայլութեան հետևող ախտերը անհաշիւ են... Խորին կերպով վշտանում եմ, որ դու հոգիս իր էութեամբ ճանաչելով հանդերձ, այդ աստիճանի անարդ կերպով ինձ կըհայհոյես։ Ծնողներուս ատելութեան պատճառը, ոչ թէ իմ շողոքորդ, այլ քո թունաւոր լեզուդ է, որ խայթել և խոցել է նրանց սիրտը։ Մի բարկանար, որ ճշմարտութիւնը կըպարզեմ, մի՛ վեր վեր թռչկոտիր, մի խանգարիր ինձ, մի՛ աղմկիր, այլ ինչպէս ես համբերութեամբ լսեցի, դու ալ լսիր։ Ոչ թէ իմ քծնելուս համար քեզ կատեն, քանի որ քեզ մի ժամանակ հարիւր անգամ ինձանից աւելի կըսիրէին, այլ քո մոլորութիւնների համար, որ անոնց հետ հաւասարապէս բաժանածդ կայքը մի քանի տարւան մէջ վատնեցիր։ Ըղբաւականացար...

—Ես իմ վաստակածս եմ տարել, իմ ճակատիս քրտինքը։ Տասնեհինգ տարեկան հասակով հօրս հետ առևտրական տուն եմ կառավարել և ես եմ վաստակել անոր քեզ համար գողացած ու սպահած ժառանգութիւնը...

—Խնդրեմ մի՛ ընդհատիր, լսի՛ր, ըսելիքդ վերջը կարող ես շարունակել։ Ըղբաւականացար այդ բաժանմունքով. տասը տարւան ընթացքում հինգ-տասն անգամ դարձեալ ահագին գումարներ տարիր...

—Դու էիր վաստակել, որ կըցաւիս տարածիս վրայ։ Իմ, իմ վաստակս եմ տարել։ Դու աշխարհք չէիր եկել, որ ես Լոնդոն, Մանչեստր, Լիօն ու Վիէննա ժուռ կուգայի և դանձ կըդիզէի քեզ համար...

—Բայց քեզ հետ խօսել անկարելի է, դու չես թոյլ տար բացատրելու։ Վերջապէս նրանք տեսնելով, որ քեզմէ ազատելիք չունին, ճարահատեալ այդ պայմանագիրը կորզել են քեզմէ, իսկ դու այժմ, ամեն բան ինձմէ շատ լաւ գիտնալէն զկնի, դարձեալ ինձ կըմեղադրես, որպէս քեզ դրկելու խորհուրդներ յղացող և թելադրող։

—Եթէ դու ըլլաս իմ տեղս, Տիրան, մի՞թէ այդպէս չես ենթադրեր, քանի որ այդ բոլորը կըկատարեն քու օգտիդ։

—Եւ դու այդպէս համոզւած ես, Աթա։

—Ես, ես։

—Այո, դու, պատասխանեց խեղդւած ձայնով Տիրանը։

—Այդ իմ գործս է։

—Քանի որ ինձ կըվերաբերի, կըպահանջեմ, որ պարզես...

—Իմ քէյֆս չուզեր, որ պարզեմ, ասաց քմծիծաղով Աթա-բէյը։

—Ուրեմն դու վատ ես. ասաց ու ինկաւ թուլացած Տիրանը թաւիշեայ բազմոցի վրայ, Բէաթրիչէի մօտ, որը մոլորած էր սրտագողից այս տխուր տեսարանին ականատես լինելով։

—Նու, լա՛ւ, լա՛ւ, այդ ձևերդ բաւական է։ Դիտեմ քիչ քէյֆիդ կպաւ, բայց ճշմարտութիւնը լսելու չափ և քաջութիւն ունեցիր։ Քաջութիւն չէ միայն քսութիւնը։

—Կաղաչեմ, բէյ, գթացէ՛ք, դադարեցուցէ՛ք ձեր նախատինքները։

—Ա՛հ, ներեցէ՛ք, ներեցէ՛ք, որ ես, շարունակեց Աթա-բէյը, ձեր քաղցր րոպէները խլեցի և դառնացրի։ Ակամայ, կեանքս վկայ, ակամայ կատարեցի այդ բոլորը։ Ճշմարիտը այնպէս վշտացած եմ հոգւով, որ ալ համբերելու կարողութիւն չունեմ։ Ինչո՞վ եմ ես խորթացել, ինչն է ստիպել,

որ ծնողներս իմ զաւակներուս երեսն անգամ չեն կամենար տեսնել։ Ես վատ եմ, այն անմեղներն ինչ մեղք ունին, կինս ինչ ըրած ունի...

—Չրէշ, դու բոլորովին ապականեալ ես։ Այդ աստիճանի ստորացած երբէք չէի ցանկալ իմ հարազատիս, ասաց կրկին գլուխը բարձրացնելով Տիրանը։ Մինթէ դու չէիր, որ բռնութեամբ հարսիս, Ազնիւին հեռացուցիր Հայրենի չարկէն, մինթէ դու չէիր, որ լացակումած բաժանեցիր զաւակներդ կամ մօրս զրկէն։ Մինթէ դու չէիր, որ արգելեցիր հարազատները իրանց սիրելիներուն այցելութիւնը։ Այդ բոլորը կատարելէն զկնի, այսօր այս անմեղի սրտի մէջ ինչ որոմ կըցանկաս աճեցնել, ասաց Տիրոնը ցոյց տալով Բէաթրիչէին։

—Ես պարտաւորած կատարել եմ պարտիքս, պատասխանեց դողդողալով Աթա-բէյը և լռեց։

—Ամօթ, հազար ամօթ, ասաց պառկած տեղից Տիրան բէյը։ Ես գիտեմ բոլոր այդ ստորութեանդ պատճառը, բայց հնարաւորութիւն չունեմ այսօր քեզ օգնելու, Գիտեմ, դարձեալ պարտատէրներդ քեզ նեղացուցած են, միայն քու պատճառով այնքան ծնողներիս գայրացուցած եմ, որ գանձի բալանին ինձմէ խլեցին։ Զատ որ ջանք դնեմ մի հարիւր, կամ երկու հարիւր ոսկով միայն կրկարողանամ քեզ օգնել, աւել ոչինչ...

—Ես մուրացկան չեմ, ես քեզմէ բան չըխնդրեցի, կարօտութիւն ալ չունիմ։ Զնորհակալ եմ, որ քեզ թողած հարիւր հազարներէն, այնքան բարեսիրտ ես, որ ողորմութիւն ալ կընես եղբօրդ, նշանաձիդ վրայ պարծենալով։ Մենք կըտեսնուենք, ասաց ու հեռացաւ Աթա-բէյը։

—Բէյ, տէր իմ, կաղաչեմ, թէև ձայն տուեց Բէաթրիչէն, բայց Աթա-բէյը առանց ետ դառնալու շարունակեց իր ճանապարհը։

ԱՏՊՇՏ

(Կըշարունակուի)

ԱՐԻՒՆ ԵՒ ԳՐԻՉ

Մատաղ սրտի ջերմ զրգիռով
Երգ կամեցայ յօրինել,
Մաճուր սրտով զրիչ վերցրի
Եւ ուզեցի սէր երգել...
Սէրը յուսակ ու մաճուր էր
Ուրէս երկինք աստղալից;
Բայց գրիչս գիր չըգրեց՝
Ու բաքսած էր ճեկտարից։

Սիրտըս լիճն էր ցաւ ու դարդով,
Աչերս պղտոր, արցալից,
Հոգուս հառաչն ու ճեկեկանք
Դեռ լսւում էր բարմ շիրմից,
Բայց երբ վերցրի մոռցած զրիչ
Եւ վէրս երգել ուզեցի՝
Իմ գրիչը էլ չ'գրեց
Երբ արցունքով բաքսեցի։

—

Անցան տարիք, սիրտս ուժասպառ
Նորից տեսաւ խոր ցաւեր,
Սէր ու պչրանք նա մոռացաւ,
Շորս կողմ վիշտ էր ու աւեր...
Իսկ իմ գրիչն ըսկսեց գըրել
Այդ ցաւերը մեր անվերջ,
Երբ ես նրան, անգութ ձեռքով՝
Թաքսեցի արեան մէջ...

—

***

Ցաւեր ունիմ դառն ու անգութ
Որ չեմ ասել աշխարհին,
Վէրք էլ ունեմ սըրտիս վերայ՝
Ցոյց չեմ տալ շատերին...
Ինձ ցաւ ու վէրք ո՞վ է տալ
Այդ չեմ ասիլ ձեզ երբէք,
Բայց եւ գիտեմ թէ ո՞ւմ դիմել.
Կամ ո՞ւմ ասել՝ «օգնեցէք»...
Լըռիկ ցաւերս սրտիս խորից
Իմ մտերմին ես կասեմ,
Խորունկ վէրքիս դեղ ու դարման
Սիրուն կոյսից ես կուզեմ...

ՊԵՏ. ՄՈՍՈՐԵԱՆՑ

ՅՈՒՆԱՍՏԱՆ ԵՒ ԿՐԻՏԻ *)

(Պատմական տեսութիւն)

I

Ներկայումս ամբողջ աշխարհը հետաքրքրած է մի հարցով—Կրէտէի հարցով, որը և առաջ նիւթ է մատակարարում թէ հեռագրական գործակալութիւններին, թէ թղթակիցներին և թէ մանաւանդ «քաղաքագէտներին»։ Այդ կղզում հրդեհած ապստամբութիւնը մեծ անհանգստութիւն է պատճառել ոչ միայն վաղուց արդէն իր գլուխը կորցրած Տաճկաստանին, այլ և ամբողջ Եւրոպային, ամբողջ աշխարհին։ Դրա ամենագլխաւոր պատճառը այն օրինակելի հաստատակամութիւնը և ինքնավստահութիւնն է, որոնցով ղեկավարում են կրէտացիք, այն բուռն հայրենասիրութիւնը և անձնազոհութիւնն է, որոնցով տոգորած են բոլոր յոյները։ Կրէտէի հարցը եւրոպական պետութիւններին դրել է երկու կրակի մէջ... Նրանք մի կողմից զգում են, որ այլ ևս անհնարին է ապստամբութիւնը ճնշել մինչև այժմ գործադրած միջոցներով, այսինքն նորանոր ռեֆորմներ առաջարկելով և անիրագործելի խոստումներ տալով (ինչպէս անցեալում), իսկ միւս կողմից չեն ուզում ապստամբների պա-

---

*) Մեր աղբիւրները.
1. «Всеобщая исторія», Георга Вебера.
2. «Исторія XIX вѣка», Гервинуса.
3. «Всемірная исторія», Шлоссера.
4. «Энциклопед. словарь», изд. Брокгауза и Ефрона.
5. «Земля и люди» Элизэ Реклю.



Գաղտնի ամուսնություն. Նկար Ի. պերե, տպագր. ս. Պետերբուրգից.

հանջը կատարել, որովհետ և դա կըլինի Տաճկաստանի տխրահռչակ statu-quon։ Թէ ինչ կըլինի այդպիսի դրութեան վերջնական հետեւանքը, այդ ցոյց կըտայ մօտիկ ապագան։

Իսկ մենք այժմ ընթերցողներին կըծանօթացնենք այդ կղզու աշխարհագրական դիրքի, բնական հարստութիւնների և անցեալի հետ, որպէսզի նրանք մի ամփոփ գաղափար կազմեն այդ հռչակաւոր կուսինծորի մասին։

Կրէտէն գտնւում է Յունաստանից դէպի հարաւ և կարծես թէ Մօրէա թերակղզու բնական շարունակութիւնն է կազմում, չընայելով որ նրանից բաժանւած է մի նեղուցով։ Նրա տարածութիւնն է (ըստ Բօլէնի) 7,8000 քառակուսի կիլոմէտր (կիլոմէտրը 1 վերստից քիչ պակաս է)։ Կղզին երկարացած ձև ունի և նրա մի ծայրից—միւսը, այսինքն արևելքից դէպի արևմուտք ձգւած է մի բարձր լեռնաշղթայ, որի գլխաւոր գագաթն է Իդա։ Այդ լեռան բարձրութիւնից պարզ երևում է ոչ միայն կղզու ամբողջ մակերևոյթը, այլ և շատ ու շատ հեռաւոր տեղեր և նոյնպէս Յունաստանի մշուշապատ ափերն ու Միջերկրական ծովի բազմաթիւ մանր ու խոշոր կղզիները։ Բացի դրանից նշանաւոր են նաև «Սպիտակ լեռները» կամ «Լէուկա-Օրի» կոչւող լեռնաշղթան, որը ընկած է կղզու արևմտեան մասում և որի ձիւնապատ ու սըրածայր գագաթները բազմիցս անգամ անառիկ ապաստան են դարձել ազատութեան համար մարտնչող քրիստոնեաների համար։ Միւսներից ուշադրութեան արժանի են «Լասսիտի» և «Դիկտէ» կոչւող լեռները։ Ահա այդպէս կղզու ամբողջ մակերևոյթը ծածկւած է լեռներով, որոնք հին ժամանակներում հռչակաւոր էին իրանց թանձր ծմակներով, իսկ այժմ բոլորովին գրկւած են անտառներից։

Կրէտէն ունի առողջարար և դիւրեկան կլիմայ... Գետերը սակաւաթիւ են և նրանցից շատերը ամառը ցամաքում են, բայց այնուամենայնիւ լեռների մէջ ընկած բազմաթիւ մանրիկ հովիտներն ու տափարակ տեղերը չափազանց արգաւանդ են։ Գտնւելով Եւրոպայի, Ասիայի և Աֆրիկայի մէջ տեղը, ունենալով բազմաթիւ ընդարձակ ու յարմարաւոր նաւահանգիստներ, Կրէտէն բնականաբար գլխաւոր կայարանն ու միջնորդն է հանդիսանում այդ երեք աշխարհների վաճառականութեան։ Եւ իսկապէս նա այդ դերը կատարել է դեռ հազարաւոր տարիներ առաջ և այժմ էլ նոյնը շարունակում է, սակայն տաճիկ բռնակալութիւնը ծծել չորացրել է երկրի ամենագլխաւոր հիւթերը, ուստի և Կրէտէն չունի իւր նախկին ծաղկած դրութիւնն ու հարստութիւնը։ Նրա գլխաւոր արդիւնաբերութիւնն են՝ ձիթապտուղ, մետաքս, դեղձ, խաղող, ձխալոտ և նարինջ (апельсинъ), որը իր համեղութեան պատճառով շատ թանգ է գնահատւում ամբողջ արևելքում։ Ձանազան թանգ է գնահատւում ամբողջ արևելքում։ Ձանապարհորդ Պերտոն իրաւացի կերպով նկատում է որ Կրէտէի երկրագործները թէև անուանով ազատ սեպհականատէրեր են համարւում, բայց իրականապէս նրանք մատնւած են տաճիկ պաշտօնեաների և աղաների քմահաճոյքին, ուստի և ծոյլ ու անհոգ են և կարծես չեն մշակում իրանց դաշտերն ու այգիները... Եւ մինչ նրանք կարող են չըծուլանալ, երբ փորձով համոզւել են, որ եթէ մի որևէ գրաւիչ բան ունենան, իսկոյն փաշան կամ աղան կըգայ և գլխներին զարկելով ձեռքներից կառնի։ Սոցիալական այդպիսի դրութիւնը կատարելապէս սրնանկացրել—աղքատացրել է երկիրը։ Այժմ հին քաղաքների և նաւահանգիստների մեծ մասը աւերած, ոչնչացած են... Կրէտէի ազգաբնակութեան թիւը հասնում է 281,000-ի, որից 184,000-ը քրիստոնեաներ են, 93,000 մահմեդականներ և մնացած 4000-ը հրէաներ։ Ըընայելով զանազան ազգերի ցեղերի արշաւանքներին, չընայելով Տաճկաստանի աւերիչ բռնակալութեան ու գազանութիւններին, Կրէտէի յոյները մինչև հիմա էլ պահպանել են իրանց մայրենի լեզուն և ազգային առանձնայատկութիւնները. ընդհակառակը, նրանք իրանց հետ ձուլել են մի ժամանակ կղզում տէր դարձած արաբներին և վենետիկցիներին։ Բայց դրա փոխարէն նրանց նախնիներից շատերն էլ բռնի կերպով իսլամացած են, այնպէս որ կղզու վրայ ապրող մահմեդականների մեծ մասը յունական ծագումից է և այժմ էլ գործ է անում յունական լեզուն։ Դժբախտաբար այդ միևնոյն ազգութեան պատկանող և միայն կրօնով անջատւած երկու տարրերի—մահմեդականների և քրիստոնեաների մէջ տիրում է սարսափելի ատելութիւն, թշնամութիւն, որ և շատ անգամ առիթ է դառնում արիւնահեղ ընդհարումների։

Կղզու գլխաւոր քաղաքներն են՝ Կանէա—ունի 15,000-ից աւելի բնակիչ. այդտեղ է նստում դեներալ նահանգապետը և յունաց եպիսկոպոսը. Մեգալօ-Կաստրօն—ունի 12,000 բնակիչ, Կանդեա—ունի 12000 բնակիչ և Րէտիմօ, որ ունի 9000 բնակիչ։

Դեռ շատ ժամանակներից Կրէտէն Յունաստանի մի մասն էր կազմում։ Նրա վաճառականութիւնը թագաւորում էր ամբողջ Միջերկրական ծովի վրայ. նրա նաւերը յարաբերութիւն ունէին շատ հեռաւոր երկրների հետ։ Յոյն պատմագիրներից մի քանիսը վկայում են, որ Կրէտէն մի ժամանակ ունեցել է մօտ 100 քաղաքներ և մէկ միլիոնից աւելի բնակիչներ։ Քրիստոսի Ծնունդից մօտաւորապէս 1000 տարի առաջ Դորիացիները այդտեղ հիմնել էին մօտ 20 հասարակապետութիւններ՝ Սպարտայի ձևով։ Դժբախտաբար այդ փոքրիկ ու անկախ հանրապետութիւնների մէջ չըկար ոչ մի ընդհանուր կապ, ոչ մի համերաշխութիւն... Ներքին կռիւներն ու արիւնահեղութիւնը անպակաս էին, ուստի և կրէտացիների ոյժը հետզհետէ չըլատւում—քայքայում էր։ Վերջապէս, 68 թ. (Քրիստոսից առաջ) Կրէտէն Հռոմայեցիների ձեռքն անցաւ և այլևս չըկարողացաւ վերականգնեցնել իր անկախութիւնը։ Փիլ ժամանակից յետոյ նա կատարեալ կուսակնձոր դարձաւ Բիւզանդիայի, Արաբների, Վենետիկցիների համար, որոնցից իւրաքանչիւրը իր հերթին նաճեց և առ ժամանակ իր իշխանութեան տակ սլահեց այդ բարերեր կղզին։ Վերջապէս տաճկաց պետութիւնը Բիւզանդիայի աւերակների վրայ ամրապնդւելուց յետոյ ձեռք մեկնեց դէպի այդ համեղ պատառը—Կրէտէն և փորձեց խլել Վենետիկցիներից։ Այդ փորձը թէև վերջ ի վերջոյ աջողութեամբ պսակւեց, բայց շատ թանկ նստեց Տաճկաստանի համար... Քսան չորս երկար ու ձիգ տարիներ տևեց արիւնահեղ մարտնրումը... Հազարաւոր քաջերի արիւնով ներկւեցին Կրէտէի ափերը և երբ այդ նահատակ կղզին բոլորովին ուժասպառ էր եղել, այն ժամանակ արիասիրտ կրէտացիները գլուխ խոնարհեցրին Տաճկաստանի հզօր ոյժի առաջ։ Այդ բանը պատահեց 1669 թւականին,

Ահա այդ ժամանակւանից Կրէտէն Տաճկաստանի գազանային ճիրանների մէջ ընկաւ. այդ ժամանակւանից իսլամի փառատիկոս որդիքը հալածել ու կեղեքել սկսեցին Քրիստոսի հետեւողներին։

Անցան տասնեակ և հարիւրաւոր տարիներ, բայց ազատասէր կրէտացիք չկարողացան հաշտուել ստրկութեան հետ։ Ամեն մի չարմար դէպքում նրանք պարզում են ապստամբութեան դրօշակը, սար ու դաշտ ներկում են իրանց անմեղ արիւնով և «ազատութիւն» են աղերսում «մարդասէր» Եւրոպայից.

Ե. ԹՈՓՉԵԱՆ

ԿՈՎԿԱՍԻ ԿԱՌԱՎԱՐՉԱՊԵՏ ԻՀԱՆ Գ. Ս. ԳՈԼԻՑԻՆԻ ԹԱՄԱՆՈՒՄԸ

Մարտի 13-ին, մօտ ժամի 5-ին Թիֆլիս ժամանեց Կառավարչապետ իշխան *Գ. Ս. Գոլիցինը* իր ամուսնու հետ։ Ժամը 2-ից յառաջ, չընայելով անախորժ ամուն, շարժողութեան մէջ էր. զօրերը երաժշտութեամբ դիմում էին դէպի ռազմա-վիրակաց հանապարհը։ Պալատից ըսկըսած մինչեւ Վերա՝ կանգնած էին գիմնազիստների, ռէալականների, Ներսիսեան եւ ուրիշ դպրոցների աշակերտները իրանց ուսուցիչներով եւ Թիֆլիսի գարնիզոնի զօրերը։

Վերայում, ռազմա-վիրակաց հանապարհի աջ կողմում սպասում էր Նիժեգորոդեան հեծելագունդը՝ զօրերի հրամանատար *Ն. Գ. Ամիլախուարիի* գլխաւորութեամբ։ Ցեղոյ կանգնած էին համքարութիւնները իրանց դրօշակներով եւ զուռնաներով. այդտեղ էին գնւում քաղաքագլխի պատասխանատուն իր երկու ընթերականերով, Թիֆլիսի կոմէնդանտը, ոստիկանապետը, վաճառականների աւագը եւ արհեստաւորների մեծը։ Ոլգինսկի եւ Գոլովինսկի փողոցների երկարութեամբ կանգնած էին զօրերի մասերը եւ կադէտները։

Հէնց որ երեւեցաւ սիրալիր դէմքով կառավարչապետը իր ամուսնու հետ նստած կառքում, ամենայն կողմից բնդաց *ուռան*։ Կառքի մօտից ընթանում էր ձիով զօրերի հրամանատարը, իսկ ետեւից քաղաքի ամեն դասակարգի ներկայացուցիչները։ Հասնելով այնտեղ, ուր գնւում էին քաղաքի ներկայացուցիչները, կառքը կանգ առաւ, եւ կառավարչապետը իջաւ կառքից։ Այստեղ քաղաքագլխի պատասխանատուն ներկայացրեց Նորին Գայծառափայլութեան, եւ քաղաքի կողմից ներկայացրեց կառավարչապետի ամուսնուն մի շքեղ ծաղկեփունջ։

Իշխան Գ. Ս. Գոլիցինը դիմեց Սիօնի տաճարը, որտեղ ժողովուել էին զինուորական եւ քաղաքացիական աստիճանաւորները ու հոգեւորականութիւնը։ Այստեղ էր Վրաստանի էկզարխը, որ շնորհաւորեց նրա գալուստը եւ մի կարճ մաղթանք կատարեց, որից յետոյ Նորին Գայծառափայլութիւնը դիմեց պալատը։

Պալատի առաջ ամբոխը այնքան խուռն էր, որ անցուդարձ անելն անկարելի էր։ Այն բոլոր տները եւ փողոցները, ուր պիտի անցնէր Կառավարչապետը, զարդարուած էին դրօշակներով։ Երեկոյեան քաղաքում լուսավառութիւն էր։

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՈՒԿԱԶ ԿԱՌԱՎ. ՍԵՆԱՏԻՆ

Ի Տէր հանգուցեալ Մեր Ծնողի կամքով Կովկասեան փոխարքայութիւնը վերացնելուց յետոյ, 1883 թ. ապրիլի 26-ին Բարձրագոյն հաստատուեցաւ Կովկասի քաղաքացիական կառավարութեան այժմեան կարգը։

Պահպանելով այդ կառավարութեան ընդհանուր հիմունքները, որոնք նպատակ ունին Կովկասը կարելոյն չափ աւելի մօտեցնելու կայսրութեանը և անմիջական կապ հաստատելու չիշեալ երկրի կառավարութեան զանազան ճիւղերի ու պատշաճաւոր մինիստրութեանց մէջ, մենք կարեւոր համարեցինք տեղական բարձր իշխանութեան ներկայացուցչին իրական միջոցներ տալ յօգուտ երկրի գործադրելու օրէնքով իրան տրուած քննութեան և վերահսկողութեան իրաւունքը, վերականգնելու, ուր հարկաւոր է, օրէնքի զօրութիւնը, վարչական տեղական մարմիններին ուղղութիւն տալու, որ նրանք կատարեն իրանց ծառայական պարտքը, և ապահովելու ժողովրդի խաղաղ բարգաւաճումը։

Ուստի, մինիստրների մասնաժողովի որոշման համաձայն, հրամայում ենք.

Կովկասի քաղաքացիական մասի Կառավարչապետի իրաւունքների և պարտաւորութեանց վերաբերմամբ սահմանել հետեւեալ ժամանակաւոր կանոնները, մինչև որ Կովկասի կառավարութեան այժմեան հաստատութեան կանոններն օրէնսդրական կարգով վերաքննւին.

1. Կովկասի Կառավարչապետը, Կովկասի վարչական կամ հասարակական հաստատութեանց մէջ որ և է անկարգութիւն և զեղծում նկատած ժամանակ, պարտաւոր է վճռական միջոցներ ձեռք առնել նրանց վերացնելու և իրերի օրինական ընթացքը վերականգնելու, այդ մասին տեղեկութիւն տալով մինիստրներին և առանձին մասերի գլխաւոր կառավարիչներին, ըստ պատկանելոյն։

2. Արտակարգ հանգամանքներում Կառավարչապետը կարող է փոխել Կովկասի նահանգական և շրջանների վարչական տեղերի (Օրէն. Ժող. Կ II. Հրատ. 2892 թ., նահանգ. ընդհ. հաստ. յօդ. 14) և հասարակական հիմնարկութեանց որոշումները և ետոյ իր կարգադրութիւններն այն առարկաների մասին, որոնց վերաբերել են փոխած որոշումները, ի կատարած, անձնապէս պատասխանատու լինելով բոլոր հետեւանքների համար, և այն պայմանով, որ նա, Կառավարչապետը իրան այդպիսի միջոցի դիմելու դրդող պատճառների մասին անյապաղ զեկուցանէր Կառավարիչ Սենատին և տեղեկութիւն տար մինիստրներին ու առանձին մասերի գլխաւոր կառավարիչներին, ըստ պատկանելոյն։

3. Պաշտօնեաների անվստահ նախնաչած, որ և է վարչութեան մէջ կատարած ակնյայտնի զեղծումների և առհասարակ կարեւոր ու անյետաձգելի դէպքերում Կառավարչապետին անկարգութիւնների առաջն առնելու համար, իրաւունք է տրւում անյապաղ հեռացնելու, մինչև որ սահմանուած կարգով արձակուին, Կովկասի վարչական տեղերի և հասարակական հիմնարկութեանց պաշտօնեաներին, բացի առանձին մասերի կառավարիչներից նահանգական և դաւառական ազնուական կանոնութեանց պարագլուխներից, որոնք

ցոյց են տրւած կառավարութեան որոշմամբ հաստատւող Առաջնորդութեանց վերաբերեալ կանոնադրութեան 169 յօդւածի մէջ (Օրէնս. ժող. հ. III. հրատ. 1896 թ.)։

4. Այս կանոնների 3 րդ յօդւածի համաձայն Կառավարչապետի ունեցած իրաւունքով արձակւած պաշտօնեաներին դատական պատասխանատուութեան ենթարկելիս Կառավարչապետը գործադրում է նահանդները ժամանակաւոր քննութեան ենթարկելու համար նշանակւող սենատորների իրաւունքներին և պարտաւորութիւններին վերաբերեալ 1880 թ. սեպտեմբեր 22-ի հարձրագոյն հրամանի 2-րդ ա. յաւելւածի մէջ ցոյց տրւած իրաւունքները, գործի հանգամանքները Կառավարչապետի խորհրդում քննելուց յետոյ։

5. Կառավարչապետին այն դէպքերում, երբ նա հարկաւոր կը դատի, իրաւունք է տրւում Կովկասի վարչական հաստատութեանց առանձին մասերի կառավարիչներից պահանջելու, որ նրանք նախապէս իր հաւանութեանը ներկայացնեն այն անձերին, որոնց մտադիր են նրանք պաշտօնի նշանակել, որպիսի պաշտօնների համար մարդիկ նշանակելը գոյութիւն ունեցող օրէնքի հիմամբ նրանց իշխանութեանն է վերաբերում։

6. Այս կանոնների վարչական և հասարակական հիմնարկութեանց ու նրանց պաշտօնեաների վերաբերող 1—5 յօդւածներում գրւած որոշումներին չեն ենթարկւում պետական կոնտրոլի և պետական բանկի հաստատութիւնները ու պաշտօնեաները։

7. Այն լիազօրութիւններից զատ, որ տրւած են Կովկասի կառավարութեան վերաբերեալ 26-րդ յօդւածում և 27-րդ յօդւածի 1-ին և 2-րդ յաւելւածների մէջ (Օրէնս. ժող. հ. II. հրատ. 1892 թ.), նրան իրաւունք է արւում Կովկասի որևէ տեղում և առհասարակ այդ երկրի սահմաններում սպրդել բնակւելու այն անձերին, որոնց բնակւելու այնտեղ Կառավարչապետը վնասակար կը համարի, գործի հանգամանքները Կառավարչապետի խորհրդում քննելուց յետոյ։

Կառավարիչ սենատը այս ի կատար ածելու համար հարկաւոր կարգադրութիւնը պիտի անի։

. Իսկական վրայ Նորին Կայսերական Մեծութեան սեպհական ձեռքով ստորագրւած է.

ՆԻԿՈԼԱՅ

Յարսկոյէ-Սէլօ
3 մարտի 1897 թ.

ՆՄՈՒՇՆԵՐ

Ալեքսանդրապոլի կեանքից

—

Թէ՛ (ախ, լեզուս կարկամւում է)
Էիր պղերգ պատանի
Եւ այրական հասակդ առած չեղար
մաքդոց պիտանի,
Անուս, անինչ, անգործ մնա լով, ծափ
ծիծաղի նշաւակ,
Թշւառ գլուխդ վայ կալդալով, շատոնց նման մտար վանք։
Գամառ Քարիպա

—

Վերջապէս մեր Բարեգ. Ընկ. էլ կենդանութեան նշան ցոյց տւեց... Շնորհիւ Վարչութեան նախագահ պ. Պեղամ Տէր-Պետրոսեանի և երկու ուրիշ անձերի՝ մօտ օրերս աւելացել են 40—50 նոր անդամներ։ Բացի դրանից փետր. 18-ին քաղաքային կլուբի դահլիճում տեղի ունեցաւ վարչութեան կազմակերպած պարահանդէսը, որ գրաւել էր մեծ հասարակութիւն «ընտիր» համարւած դասակարգից։ Հանդէսը անցաւ ուրախ և աչող... զուտ արդիւնքը մօտ 800 ռուբլի կըլինի։ Ցաւալին միայն այն էր, որ երեկոյթը չունէր գրականական-երաժշտական բաժիններ, որոնք կարող էին աւելի մեծ բաւականութիւն պատճառել քան թէ անվերջ պարերը...

—

Տեղիս Բարեգ. Ընկերութիւնը քաղաքում ապրող գաղթականներին 2-2 ռուբլի բաժանելով և դրանով իր պարտքը կատարած համարելով, ձեռք մեկնեց դէպի գաւառը և հրաւէր կարդաց գիւղերում ապրող բոլոր գաղթականներին, որպէս զի նրանք գան Ալէքսանդրապոլ և Բար. Ընկ. օգնութիւն.ստանան... Անցաւ մի քանի օր... Ամեն կողմից քաղաք թափւեցին սովալլուկ, մերկ ու բակոտն գաղթականները՝ մէկ-մէկ յանձնարարական (քահանաներից) թուղթ ձեռքերին։ Նրանք 50-60 վերստ ճանապարհ էին եկել... Ինանդներն ու ծերերը իրանց կողմից ուրիշ հաւատարմատարներ էին ուղարկել։ Եւ այդ բոլորի փոխարէն, ընդհերցող, գիտէք ինչ էր Ընկ. առաջարկած օգնութիւնը... Մի մի կապոց ցնցոտիներ, որոնց վրայի կլասիքական կեղտն ու հոտը մարդու զզւանքն էր շարժում և որոնց նմանը շատ կարելի է գտնել աղբանոցներում...

Բնականաբար գաղթականներից շատերը հրաժարւեցին այդ օգնութիւնն ընդունելուց, իրաւացի կերպով ասելով. «Մըր ձժեր հաց կուզեն, իտա չուլ ու փալաս ի՞նչ ընենք. Ի մա՞լ տանինք»... Ձատերն էլ յայտնում էին, որ ընկերութեան այդպիսի վարմունքը ոչ թէ օգնութիւն, այլ մի մեծ թշւառութեան աղբիւր է, որովհետև դիւզացիները կըկարծեն թէ գաղթականները ընկերութիւնից փող են ստացել և կըդադարեցնեն իրանց օգնութիւնը, որի հետևանքը կըլինի հարիւրաւոր թշւառականների անտուն, անտէր մնալը։ Եթէ վարչութիւնը միայն այդ ցնցոտիները պիտի բաժանէր, էլ ինչու էր այդքան «հարայ-հրոց» հանում, գաղթականներին քաղաք հրաւիրում... մի՞թէ չէր կարելի այդ ամենը ուղարկել գիւղերը գործակալ կամ ծխատէր քահանաներին որպէս զի նրանք բաժանէին...

Ընդհայելով գաղթականների անվերջ այերսանքներին ու արդարացի տըրտունջներին, վարչութեան նախագահը անդրդեւելի մնաց և չըհամաձայնեց գէթ մի քանի ռուբլի փող բաժանել... Հետաքրքիր էր իմանալ հապա ինչո՞ւ համար է պահւում պարահանդէսի արդիւնքը... Ապագայ կար ու ձևի դպրոցի համար... Ա՛յ, խելացի ցանկութիւն. եթէ փողը գաղթականներին բաժանեն, կուտեն և վարչութեան գործունէութիւնը շուտով անցուկ-մուցուկ կըլինի, իսկ երբ կար ու ձևի դպրոցը բաց անեն, այն ժամանակ նրա անդամների և մանաւանդ նախագահի անունը կ'անմահանայ (!?)։ Ա՛յ թէ ինչ կընշանակէ հեռատեսութիւն...

—

Այս տարի բարեկենդանին ոչ մի ներկայացում, ոչ մի երեկոյթ տեղի չունեցաւ... Նոյն իսկ Վարդանայ ոօնը բոլորովին աննկատելի կերպով անցաւ, բայց դրա փոխարէն բազմաթիւ ամուսնութիւնները մի մեծ խնջոյքի կերպարանք էին տւել Ալէքսանդրապոլին... Ամեն շաբաթ, ամեն օր գրեթէ մի նոր նշանդրէք, մի նոր ամուսնութիւն էր կատարւում... Սակայն ամենից նշանաւորը էր միայն մէկը։ Դա մեր «տուզերից» մէկի «պարեհաւասակ» որդու սպակադրութիւնն էր, որ երկար խօսակցութեան նիւթ դարձաւ...

Դա նշանաւոր էր նախ իր արտաքին շքեղութեամբ և երկրորդ՝ հետևեալ միջնադէպով. եկեղեցի մտած

ժամանակ այնտեղ լինում են արդէն 2 ուրիշ պսակուող զոյգեր. բայց մեր տուզը չանգնում է պահանջել, որ դրանց չետ կանգնեցնեն և իր որդու պսակը բոլորից առաջ կատարեն... քահանաները չայտնում են որ եկեղեցական Ծիսակատարութեան մէջ բացառութիւն չի կարելի անել... Այդտեղ «մեր տուզը» մոռանում է իր «ֆոգին» և եկեղեցու մէջ սկսում է բղաւել, գոռգոռալ և աններելի լուտանքներ թափել բերնից... Մի հարցնող լինի դրանից, թէ ինչն է իրաւունք տալիս այդպիսի չանգնութեան և մեծամտութեան... Իր մեծ հարստութիւնը... Բայց ինչի՞ է պէտք այդ հարստութիւնը, երբ նրանից ոչ մի շահ չըկայ ոչ մի հասարակական գործի, ոչ մի հիմնարկութեան...

Փաստե՞ր էք ուզում. հարց ու փորձ արէք Հարեգ. Ընկերութեանը, Աղքատանոցի հոգաբարձուներին, բազմաթիւ չքաւոր ընտանիքների և վերջապէս սովալլուկ գաղթականներին, որոնք միշտ էլ փակաձ են դտել այդ հարուստի քարացած սիրտն ու քսակի բերանը...

ԴԻՄՐԵՑԻ

Ալեքսանդրապոլ, 25 փետր.

Դէլֆինօ-Մէնօտտի (բարիտոն).

Տ. Մունիուս (դրամատիկ սոպրանօ).

գեղարուեստ

թատրոն, երաժշտութիւն

Տ. Մունիուս (դրամատիկ սոպրանօ) և պ. Դէլֆինօ-Մէնօտտի (բարիտոն)—ահա երկու առաջնակարգ երգիչներ, որոնք իտալական խմբի մէջ խոշոր տեղ ունին և գրաւել են մեր հասարակութեան դմայլանքը։

Տ. Մունիուս բոլորովին կատարելագործած երգչուհի է։ Նրա ձայնը, երգեն ու ճաշակը շատ զարգացած են, և եթէ արտաքինն էլ մի փոքր համապատասխաներ իր դերերին, նա անշուշտ կարող կը լիներ ամբողջովին հմայել իր ունկնդիրներին։

Պ. Մէնօտտիի մասին անցեալ անգամ երկար խօսեցինք և դարձեալ ասելիք ունենք. երբ կը խօսենք Համլէտի առիթով։ Վաղուց է Թիֆլիսը նոյն իսկ դրամատիկ խմբի մէջ այնպիսի դերակատար չի տեսել, ինչպէս պ. Մէնօտտի։

Ափսոս և շատ ափսոս, որ խմբերգը երբեմն փչացնում է լաւ անսամբլը և ոմանք [illegible] խմբական երգիչներից իրանց բալագանային շարժուածքներով ծիծաղ են յարուցանում հանդիսականների մէջ։ Անկիրթ ճաշակը, մի փոքր միմիկը մանաւանդ, աւելի են աչքի ընկնում, երբ նրա հանդէպ տեսնում էք չքնաղ, իւրաքանչիւր մի մազի շարժուածքն անգամ չափած, կրթուած վայելուչ դերակատարի։

Ձաբաթ ւայ ընթացքում երեք անգամ անյաջողութեան հանդիպեցին օպերային ներկայացումները արտիստների չանկարծակի հիւանդութեան պատճառով։ Արտիստական, իրանցից անկախ այս պատճառները շատ վատ են ազդում հասարակութեան վրայ և շօշափելի զրկանք հասցնում անտրպրիզային։

Ուրբաթ օրը պիտի երգէր Գունօի Ֆաուստը, թատրոնում ասեղ գցելու տեղ չըպիտի լինէր, սակայն վարագոյրը բացելուց քանի րոպէ առաջ յայտարարեց, որ երգիչներից մէկի հիւանդութեան պատճառով ներկայացումը չետաձգւում է։

Նորա օպերայի ժամանակ էլ դարձեալ երգչուհիներից մէկը չանկարհիւանդացաւ և այդ օպերայի 2-րդ ու 3-րդ դործողութիւնների փոխարէն թէև տ. Մունիուսի մասնակցութեամբ երգեցին «Գիւղական ասպետութիւն» թիֆլիսցիներին շատ սիրելի օպերան, այնուամենայնիւ հանդիսականները դժգոհ հեռացան թատրոնից, մեղադրելով երգիչներին, նրանց կամայականութիւնը, անզգուշութիւնը և այլ բոլորի բնական հետևանք, արտիստի աշխարհում ընդունուած, չանկարծակի հիւանդանալը։

Այսօրւանից սկսելու է Թիֆլիսցիներին լաւ յայտնի տ. Լիւբատովիչ, որ վերջին ժամանակներս մայրաքաղաքում է խաղում, երգել և մեր իտալական խմբի մէջ։

Ս. ՎԱՐԴԱՆ. ՏՕՆԸ ԵԿԱՏԵՐԻՆՕԳՈՐՈՒՄ

Փետրարի 20-ին տեղիս եկեղեցական-ճխական դպրոցում հանդիսաւոր կերպով տօնուեց ս. Վարդանանց նահատակութեան յիշատակը։ Եկեղեցին լիքն էր աղօթաւոր ժողովրդի հոծ բազմութեամբ. ներկայ էին դպրոցի երկսեռ բոլոր սանները իրանց ուսուցիչներով։

Ս. պատարագին երգում էր տեղիս բացառապէս խանութներում ծառայող երիտասարդաց քառաձայն խումբը, ղեկավարութեամբ դպրոցի աւագ-ուսուցիչ պ. Ար. Տէր-Խաչատրեանի. Ի դէպ. պարտ ենք համարում այստեղ արձանագրել, որ ամենայն գովութեան արժանի այդ երիտասարդաց խումբը յօժար կամքով, ինքնաբերաբար և առանց որ և է նիւթական ակնկալութեան, այլ միայն հայ եկեղեցու պայծառութեան նախանձախնդիր ոգով վառուած՝ ամեն կիւրակի և հանդիսաւոր օրերին պատարագին երգելով՝ անպատում հրճւանք է պատճառում եկեղեցասէր ժողովրդին։

Զկնի ս. պատարագի հոգեհանգիստ կատարեց, որից յետոյ ամենքն էլ, առանց բացառութեան, դիմեցին դպրոցի դահլիճ, որ զարդարուած էր ըստ պատշաճին, իսկ կայսեր և ս. Վարդանի պատկերները ծաղկեայ սիրուն պսակներով պարփակուած։

Հանդէսը բացւեց «Նորահրաշ» հոգեբուղխ շարականով և «Տէր-պահեա» մաղթանքով, որ երկսեռ մատաղ սանները երգեցին հիանալի կերպով։ Այնուհետև աւագ-ուսուցիչը՝ տօնի առիթով մի հակիրճ և բաւական ազդու բանախօսութիւն արաւ, որին հետևեց աշակերտներից մէկի՝ «Հիմի՛ էլ լռենք» ոտանաւորի սիրուն ընթերցումը։

Ապա առաջ գալով դպրոցի ուսուցչուհի օր. Նատ. Գրիգորեանը, ոգևորուած մի ճառ կարդաց՝ շատ սիրուն բացատրելով այդ տօնի մեծ նշանակութիւնը։ Մանաւանդ գեղեցիկ էր ճառի վերջում դիմումն ու յորդորը, որի համար իրաւամբ արժանացաւ չարգելի օրիորդը ներկայ դտնուղների բուռն և սրտագին ծափահարութիւններին, իսկ հանդէսի վերջումն էլ շատերը շնորհալի օրիորդին իրանց շնորհակալութիւնները յայտնեցին։

Դրանից յետոյ աշակերտուհիներից մինը «Կորաւ Թիւրգոն», միւսը «Հայերուս թուքը» ոտանաւորները կարդացին գեղեցիկ առոգանութեամբ։ Հանդէսի վերջաբանն էր «Լռեցին ամպերը» և «Մեր նախնիքը ազգի համար» երգերը, որ կատարեցին կրկին դպրոցի սանները այնպէս սիրուն և ոգևորւած, որ նոյնպէս արժանացան երկարատև ծափահարութիւնների։

Հանդիսականներն ամենքն էլ հեռացան դպրոցից լաւ տպաւորութեան տակ և գոհ սրտով։ Դպրոցի սաներին մերթ բաժանւեց այդ օրը. իսկ եկեղեցու երգեցիկ խմբին՝ երախտագէտ ժողովրդի կողմից շնորհակալութեան նախաճաշիկ տրւեց։

Այս երրորդ անգամն է որ մեր դպրոցից դուրս ենք գալիս ըստ ամենայնի հոգեպէս մխիթարւած։ Առաջին անգամ ս. Ծննդեան տօներին աշակերտական ուրախ հանդիսից յետոյ, իսկ երկրորդ անգամ սիրեցեալ Վեհափառ Հայրիկի անւանակոչութեան տօնին, որ այսօրւայ նման տօնւեց շատ շքեղ կերպով ահագին ժողովրդեան ներկայութեամբ։

Այսպիսի հանդիսակատարութիւնները անկասկած կրթիչ նշանակութիւն ունին ոչ-միայն ուսանող մատաղ սերնդի, այլև հասակաւորների վրայ. ուրեմն շնորհակալութիւն այդ հանդէսների նախաձեռնողներին, որոնք արժանի են ամենայն յարգանաց և խրախուսանքի։

Հանդիսատես

Փետր. 21.

ԶԶԻԵԼԻ ԿԱՊԿՈՒԹԻՒՆ

Սուվորինի և ընկ. դափնիները նախանձ են յարուցանել Кавказъ-ի անփորձ խմբագիր պ. Վելիչկօի մէջ. Նա բոլորովին կորցրել է իրան և իր թերթերի մէջ հրապարակաւ յայտարարել է իր վրացի լինելը։ Բացի այդ՝ նա իրան շատ արժանաւոր մի պաշտօնակից է գտել, յանձին յայտարութիւնների թերթի հրատարակիչ մի վրացու։ Այդ երկու հրապարակախօսների անմիտ և անտեղի յօդւածները տարաբախտաբար ուշադրութեան են առնւում մեր տեղական մամուլի կողմից։

Այդ բանակռիւը մի նոր փաստ լիշեցրեց միայն վրացիներին, այն, որ Թիֆլիսը իսկապէս հայկական քաղաք է և ոչ թէ վրաց։ Ահա թէ ինչ է ասում Нов. Обоз. իր մի յօդւածում, որից քաղւածօրէն օգտւում ենք.

Ինչ վերաբերում է այն բանին, թէ Վրաստանի հին մայրաքաղաք Թիֆլիսը խլել են հայերը, Տուրնէֆորի գրւածքից երևում է, որ 1701 թ. Թիֆլիսում բնակւելիս եղել են քսան հազար բնակիչ, որոնցից 14 հազարը հայեր էին, 3 հազար թուրքեր, 2 հազար վրացիք և 500 կաթոլիկներ։ Վլադիկինի գրքում կարդում ենք նաև որ 1803 թ. Թիֆլիսի 2,700 տնից 2,681-ը պատկանում էին հայերին։ Եւ այսպիսով հաստատւում է, որ Վրաստանի մայրաքաղաքը ամբողջապէս հայերի սեպհականութիւնն էր։ Կրկին ահա թէ ինչ ենք լսմանում Կովկասին լաւ ծանօթ Վէյդենբաումի գրքից։ Թիֆլիսը էտնոգրաֆիական մտքով—է, և կարծեմ եղել է հին ժամանակներից հայոց քաղաք։ Վրացիները այդտեղ բնակւելիս են եղել միայն իբրև պաշտօնեաներ, իրանց ընդարձակ շտաբով, որոնք բաղկանում էին զանազան աստիճանի ազնւականներից։ Քաղաքացիները եղել են այսպէս ասած՝ մոհամմեդական, այսինքն արհեստաւորներ և զանազան առևտրականներ, որոնք բոլորն էլ հայեր էին և Թիֆլիսի բնակիչների մէջ մեծամասնութիւնն էին կազմում։ Վրացիները շատ անգամ դիմում էին մոքսայքներին, երբ փողի կարիք էին ունենում։ Մոքսայքները օգտւում էին նշանաւոր իրաւունքներով և ունէին արտօնութիւններ։ Վրացիները քաղաքային կեանք վարելու և դեպի նրա հետ կապւած պարապմունքները հակումն չեն ունեցել... Միայն ռուսական վարչութիւն մտցնելով այդ դասակարգի մէջ միայն մի վրացի ընտանիք էր գրւած... Քաղաքի մեծը, ըստ երևոյթին, մելիքն էր. և այլն...

Տարագի հետևեալ № №-ից մէկում կըտպագրենք նոյն իսկ թէ Արշակունեաց թագաւորութեան ժամանակ վրացիները ինչ դերք և տեղ ունէին Թիֆլիսում և ամբողջ Վրաստանում։

Դրամատունք

Ստացանք Թիֆլիսի հայոց Հրատարակչական ընկերութեան հրատարակութեամբ լոյս տեսած մի նոր գրքոյկ «Դասընկերներ» (պատանիների ընթերցանութեան համար), հեղինակուած Ա. Աննենսկայեայի։ Այս գրքոյկի հեղինակուհու անունը ռուսաց մանկական գրականութեան մէջ բաւական յայտնի է մի շարք մանկական գրւածներով։ Աննենսկայեան սիրում է իր մանուկ ընթերցողներին և ամեն կերպ աշխատում իր երկերով օգտաւէտ լինել նրանց։ Սակայն տիկնոջ (թէ օրիորդի) գրականական ձիրքը չի համապատասխանում նրա բարի ցանկու-

թեանը։ Տիկնոջ գրաւածները մեծ մասամբ ձանձրալի են, զուրկ ստեղծագործութիւնից, լի տաղտկալի խօսակցութիւններով, բայց նրանց բովանդակութիւնները բաւական մօտիկ են բնականին։ Հրատարակչական ընկերութեան խմբագրական մասնաժողովը ռուսաց գրականութիւնից դէնը ոչինչ չի ճանաչում, ուստի պահանջել նրանից աւելի, քան նա կարող է տալ և տալիս է—այլ ևս մեր կողմից խստասրտութիւն կըլինէր։

«Դասընկերները» գրքոյկը թարգմանել է ոմն Կ. Գիւլնազարեանց, և, պէտք է խոստովանած, պարոնը ոչինչ չանք չի խնայել բազմաչարչար հայկական լեզուն, կարելոյն չափ, աղաւաղելու։ Եւ նա իր նպատակին լիովին հասել է։ Աղաւաղումը այնքան փառաւոր է, որ խեղճ թարգմանութիւնը յիշեցնում է Մօլլա Նասրադինի գլուխը լամ սափրիչի ձեռքում։ Գրքոյկը արժէ 50 կոպէկ։

ԼՈՒՐԵՐ

Դուռը յայտագրով դիմեց եւրոպական դեսպաններին, որով նրանց ուշադրութիւնն է հրաւիրում այն բանի վրայ, թէ հայկական յեղափոխական կոմիտէները արտասահմանում սկսում են նորից ուժեղ կերպով գործել և մտադիր են հայերին նորից ապստամբեցնել, գործակալների միջոցով։ Դուռը յանձնարարել է բոլոր Փոքր-Ասիայի նահանգապետներին հետևել այդ շարժողութիւններին և խիստ միջոցների դիմել վերջ տալու ամեն տեսակ ապստամբութիւնների։

—

Times հաղորդում է, թէ շուտով լոյս կըտեսնի Գլադստնի նամակը՝ Ե-րեւելեան հարցի մասին՝ ուղղած Վեստմինիստերի դքսին։

—

Պոլեսի հայերին սպառնում է կոտորած։ Նրանք վերջին ծայր ազգատութեան են հասել։ Մահմեդականները նրանց կողոպտում են և սպանում։ Որովհետև Պոլեսը գտնւում է ծովի ափին և նաւերով կարելի է օգնութեան հասնել, անգլիական դեսպանը պահանջեց անյապաղ միջոցներ ընձեռնել աղէտների առաջն առնելու։

—

Տաճկաստանից գաղթած հայերին կրկին երկու շաբաթ ժամանակ է տրուած վերադառնալու համար։

—

Պետութիւնների դեսպանները միաձայն պահանջել են Դրանը հեռացնել Ադանի վալիին և Պոլեսի գայմագամին, որոնք մահմեդականների մէջ գրգիռներ են յարուցանում։ Դիմումն է արած Գեմիւրիկում տեղի ունեցած դէպքերի առիթով և Սրբազի վիլայէթում։

Արդեօք դեսպանները չըյօգնեցին միշտ այդպէս միաձայն դիմումներ անելուց, քանի որ դիմումը դիմումն է մնում։

—

Օրմանեան սպատրիարքը շատ նեղն է ընկել, որովհետև Լոնդոնի յեղափոխական մասնաժողովը խնդրել է ստիպել Դուանը, որ նա կատարէ բէֆորմների մասին տուած իր խոստումը, ապա թէ ոչ նա նորից գործի կըդիմէ։ Սպասում է մօտերս պատրիարքի հրաժարականը։ Նա կամ պիտի հրաժարւի, կամ պիտի իր խոստումը կատարի։

Վերջապէս պատրիարքը համոզւեց, որ Դռնից բարիք չուսալ հայերի համար՝ աւելի քան անմտութիւն է։

—

Բէֆորմները պետութիւնները իրագործում են Հայաստանում։ Ռուս գործ. նորերս հեռագրում է. «Թոխաթում կոտորած է եղել, մարտի 7-ին, որի ժամանակ սպանուած են հարիւր հայ։ Քաղաքն էլ ուղի ժամում կողոպտել է։ Դեսպանները միասին դիմել են Դրանը խստիւ պահանջելով, որ մեղաւորները ձերբակալւեն և պատժի ենթարկւեն։ Թոխաթ գնում է քննիչ յանձնաժողով»...

—

Հրատ. Ընկ. ընդհ. ժողովը նշանակուած է շաբաթ, մարտի 22-ին։

—

Այսօր երեկոյեան Կ. Ս. Բ. Ընկ. ընդ. ժողովի շարունակութիւնն է։ Սկիզբն է 7½ ժ. երեկոյեան։

—

Վերջին ժամանակներս այլևս Թիֆլիսում բծաւոր տիֆով հիւանդացողներ չեն լինում։ Միքայէլեան հիւանդանոցում կան 14 հիւանդներ, որոնցից մէկը մեռաւ մարտի 9-ին։

—Քաղաքային վարչութիւնը վճռել է քաղաք. հիւանդանոցի համար անվճար տոմսակներ տալ քաղաքիս շատ էխեղճ բնակիչներին։ Նրանք այսուհետև կրսանան ձրիաբար պեղ և բժշկական օգնութիւն։

—Ա. Ֆ. Տուրկովսկու առաջարկութեամբ Թ. քաղ. վարկի ընկերութեան ժողովում (23-ին մարտի) քննելու է տասկահայ գաղթականներին նպաստ տալու հարցը ընկերութեան միջոցներից։

—Վանի անգլիական վոխ-հիւպատոս Էլիօտը ներկայումս Թիֆլիսումն է գտնւում։

—Կովկասում կըհիմնւի գիւղատնտեսական կայարան, մշակելու օրինակելի գիւղատնտեսական դաշտեր։ Այդ նպատակի համար յատկացրած է 11.930 րուբլի։

խառն լուրեր

Կրէտէն խաղաղացնելու համար պետութիւնները նրան արդէն պաշարեցին։ Պէտք է պաշարեն նաև Յունաստանի նաւահանգիստները։ Այդ պիտով ապստամբներին և յունական զօրքերին մեծ պետութիւնները ուզում են հասկացնել, որ նրանք բաւականանան Կրէտէի ինքնավարութեամբ, որ բոլոր պետութիւնները պաշտօնապէս ընդունել են։ Սրանով Կրէտէի հարցը վերջացած չի համարւում, որովհետև Յունաստանը չի ուզում իր զօրքերը դեռ կանչել Կրէտէից և նաւատորմիղը կրէտական ջրերից։ Ապստամբներն էլ նոյն իսկ ընդդիմանում են եւրոպական զօրքերին և նրանց հրազէններին հրազէններով են պատասխանում։ Կրէտէն պաշարելու համար պետութիւններից իւրաքանչիւրը 1000-ական զինուորից զօրք է ուղարկում։ Դա դիպլոմատների խօսքով կոչւում է խաղաղ պաշարումն...

—Տաճկաստանն ի նկատի ունենալով, որ մօտիկ ապագայում Մակեդոնիայում ապստամբութիւն կըբռնկի, կենտրոնացրել է այնտեղ 80 հազար մարդ։ Զօրքերը վատ են զինած։

—Կրէտէի կառավարիչ ի նկատի ունեն պետութիւնները Ձերնոզորիայի իշխանի որդուն և Վոլդէմար պրինցին, որ յունական թագաւորի եղբայրն է։

—Հաստատ տեղեկութիւններ կան, թէ Ռումդարիայի, Սերբիայի և Ձերնոդորիայի մէջ դաշնակցութիւն է կապւած, Ռուսիայի հովանաւորութեամբ։

—Գերմանիայում մեծ ողևորութեամբ տօնեցեց Վիլհելմ I ի ծննդեան հարիւրամեակը։

մեր պատկերները

Օրէստը հանդիպում է Իֆիգէնիային. Նկար Կաուլբախի

Կաուլբախի այս նկարը ներկայացնում է Գեօթէի «Իֆիգէնիան Տաւրիդում» դրամայի երրորդ գործողութեան այն տեսարանը, որտեղ եւմենիդներից հալածւած Օրէստը Տաւրիդեան Արտեմիսի տաճարում հանդիպում է իր քոյր Իֆիգէնիային։

Եւմենիդները, այդ խղճի մարմնացեալ տանջանքները, շարունակ հետեւում են նրան, որ իր հօր վրէժն առնելու համար սպանել է մօրը, և այդ տանջանքներով նա ընկնում է Տաւրիդ, Արտեմիսի տաճարը, որի քրմուհին իր քոյրը – Իֆիգէնիան պարտաւոր էր Արտեմիսին զոհ բերել ամեն մի անցաւորի, ով որ կ'ընկնէր նրա տաճարը, և ահա այդտեղ յայտնւում է իր եղբայրը։ Քոյրն ուզում է եղբօրը փրկել, բայց նա ցանկանում է մեռնել, որովհետև այդպիսի տանջալի կեանքը վատթար է մահից։

ԳԱՐՆԱՆԱՄՈՒՏ

Նկար Ի. Կլեւրի, փորագր. Կ. Պաստուշկեւիչ.

Նայեցէք թէ ինչպէս է զարթնում ձմեռային քնից այս սիրուն անտառը։ Ձիւնը տեղ տեղ արդէն սկսել է, հողը լսառնւել է նրա հետ։ Ժրաջան գեղջուկը իր սայլակով անցել է այդ անհարթ ճանապարհով և իր կոշտ, սակայն անարատ ձեռներով, չընայած դեռ փոփոխական եղանակին և քամուն, սկսել է մաքրել ճանապարհը, որպէս զի վարթամ քաղաքացիները ամարանոց գան և իրանց մաշւած հոգին, թոյլ մարմինը այստեղ կազդուրեն։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ

Տարազի №8-ում տպագրւած «Զգացմունք» հոգեբանական հետւդը, մեր գաւառական քաղաքներից մեկում առիթ է տւել զանազան տգեղ խօսակցութիւնների, որովհետև այդ քաղաքում մի օրիորդ կայ անունը Սոֆի և այդ քաղաքում մի ուսանող է եղել անունը՝ Լեւոն։ Անունների մէջ այդ տեսակ զուգադիպութիւնը, բամբասանքի համար ոչինչ էլ չըլինայող պարապ գաւառական քաղաքը, ցաւում ենք թոյլ է տւել իրան ընդհանուր մի գեղարւեստական գրւածքից այդ տեսակ եզրակացութիւններ անել։

Դրականապէս յայտնում ենք, որ Տարազը զզւում է լսելով անգամ, երբ մի որևէ է գրագէտ իր գրիչը գործ է դնում անհատի մասնաւոր կեանքից մի ամենաղօտ փաստ առաջ բերելով, ուր մնաց դեռ մեզ մեր թերթերում տեղ տայինք այդպիսի գրւածքներին։

Տարազի 92 թ. № 41-ումն էլ «Երեք ճամակ» վերնագրով այդ տեսակ մի գրւածք, յիշում ենք, մեր գաւառական քաղաքներից մեկում նոյնպէս զանազան տգեղ խօսակցութիւնների առիթ էր տւել, չընայած որ այնտեղ չիշւած անունները օտար էին և որ յօդւածի ճակատին չիշւած էր հեղինակի Մաթիլդա Սերաո անունը և որ այդ գրւածքը թարգմանւած էր Вѣст. Иностран. лит. հանդիսից։

Մեր աշխատակիցները բաւականաչափ գիտեն և ճանաչում են մեր ուղղութիւնն ու ձգտումները, և մենք համոզւած ենք, որ երբէք նրանք թոյլ չեն տալ իրանց ի չար գործ դնել մեր վստահութիւնը ու արատաւորել իրանց գրիչը։ Հակառակ դէպքում, որքան էլ թանդ լինի մեզ համար այդ աշխատակցի մասնակցութիւնը մեր գործում, ընդ միշտ փակւած կըլինեն Տարազի և Աղբիւրի էջերը նրա համար։

Ներկայ պարագայում Զգացմունք էտիւդը սոսկ փանտազիա է, մի քանի գրւածքների ընթերցումից յետոյ շարադրւած։

Խմբագրութիւնս իր վիշտն է յայտնում, որ գաւառացի հայը դեռ անկարող է ջոկել գեղեցիկը տգեղից, բարին չարից։

Ներողութիւն ենք խնդրում և այն անձինքներից, որոնց անունները, շնորհիւ մեր տպագրած Զգացմունք էտիւդի, անմեղ վիրաւորանքի և բամբասանքի առարկայ են դարձել։

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Գետաբէգ. Մ. Ջ. Փոխանակ մեզ զանգատելու, որ Տարազի №№-ը ուշ են մեզ հասցնւում, աւելի նպատակայարմար չէ՞ր լինիլ, որ այդտեղի պոստատանը ցոյց տայիք Թիֆլիսի պոստատան ամաթիւը, որ իւրաքանչիւր №-ի բանդերոլին խփւած է և պահանջէիք բացատրութիւն №№-ը անկարդ մեզ հասցնելու համար։ Դրականապէս յայտնում ենք մեզ, որ Տարազը իւրաքանչիւր կիրակի առաւօտեան պոստ է յանձնւում և ստանում պոստատնից սահմանւած ստացական։ Դետաբէգում Տարազը անպատճառ պէտք է ստանանք նոյն օրը երեկոյեան, եթէ Զագամի կայարանի երկաթուղու պոստը այդտեղ ամեն օր ստանում էր։ Յաւոկ խընդրում ենք մեր բողոքը գրաւոր յայտնէք այդտեղի պոստատան։ Ձեր նամակն էլ մենք ներկայացրինք այստեղի պոստատանը, խնդրելով քննութիւն։

Տիեզերքի մէջ Գ. Տ. Տարազը երբէք չի զբաղւել մասնաւոր անձնաւորութիւններով։ Մենք ի՞նչ անենք, որ այդտեղ զուտ գրական, գեղարւեստական գրւածքների մէջ էլ պարապ մարդիկ կոմճենում են իրանց այս կամ այն ծանօթների կեանքը տեսնել։ Ցաւում ենք, աւելի ոչինչ չենք կարող ասել։

Թիֆլիս. Մշակ լր. խմբ. Ձեզ յանձնելու մի ծրար կայ ստացւած Տարազի խմբագրութեան գրասենեակում. բարեհաճեցէք ստանալ։

Բալախանի. Ա֊թ. Մ. Ա. Տարազի իւրաքանչիւր № արժէ 25 կ.։

Վիէն. Գ. Գ. Ուրախ կը լինենք, եթէ դրէք ամիսը յօդւածները, ֆելետօններ գրականութեան, գեղարւեստի շրջանակում։ Հետաքրքիր են Յունաստանի, Իտալիայի արդի գրական-հայրենասիրական աշխարհից և գործերից դրւածքները։ Սոսկ քաղաքական յօդւածներ չենք տպագրում։

Խմբագիր-հրատարակիչ՝

Տիգրան Նազարեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. Հ. Բարեգ. Ընկերութեան խորհուրդը յայտնում է ի գիտութեան ընկերութեան անդամների, որ Ընդհանուր ժողովի շարունակութիւնը, որ նշանակւած էր մարտի 9-ին, եւ յետաձգւած անկանկալ պատճառով, նշանակւած է կիրակի, մարտի 16-ին, երեկոյեան ժամը 7½-ին Թիֆլիսի դումայի դահլիճում։ 1 1

VIII г. РУССКОЕ ОБОЗРѢНІЕ. VIII г.

ЛИТЕРАТУРНО-ПОЛИТИЧЕСКІЙ и НАУЧНЫЙ ЖУРНАЛЪ.

Выходитъ въ Москвѣ **безъ предварительной цензуры**, 1-го числа каждаго мѣсяца, книжками до 30 печатныхъ листовъ по той же программѣ и при участіи тѣхъ же ближайшихъ сотрудниковъ, что и въ прежніе годы.

Содержаніе журнала и въ 1897 г. будетъ отличаться обычнымъ разнообразіемъ и полнотой. Кромѣ богатаго запаса беллетристическихъ произведеній (романовъ, повѣстей, разсказовъ, стихотвореній и т. п.), пріобрѣтены, между прочимъ, неизданныя **Воспоминанія объ А. С. Пушкинѣ, А. Н. Островскомъ** (воспоминанія его секретаря), **Воспоминанія покойнаго архіепископа Никонора, посмертныя статьи Ю. Н. Говорухи Отрока** (Ю. Николаева), **письма М. Н. Каткова, П. М. Леонтьева, И. С. и К. С. Аксаковыхъ. И. С. Тургенева, К. Н. Леонтьева, Н. П. Гилярова-Платонова, Н. С. Кохановской, А. И. Герцена, Н. П. Огарева и др.**

ПОДПИСНАЯ ЦѢНА съ пересылкой и доставкой: на годъ—15 руб., на полгода—7 руб. 50 коп., на 3 мѣсяца—3 руб. 75 коп., на 1 мѣсяцъ—1 руб. 25 к. Заграницу съ пересылкой 18 руб.

Для лицъ духовныхъ званій, для гг. преподавателей высшихъ среднихъ и низшихъ учебныхъ заведеній, для лицъ военнаго сословія и для учащихся въ высшихъ учебныхъ заведеніяхъ подписная цѣна: на 1 годъ—12 руб., 6 мѣс.—6 руб., 3 мѣс.—3 руб., 1 мѣс.—1 руб. За границу 15 руб. съ пересылкой.

Правительственныя и общественныя учрежденія всѣхъ вѣдомствъ, полковыя библіотеки, военныя собранія, а равно и лица, состоящія въ оныхъ на службѣ, могутъ получать журналъ въ кредитъ, заявивъ о семъ конторѣ журнала черезъ свои канцеляріи.

NB. Лица, подписавшіеся **одновременно** на журналъ *Русское Обозрѣніе* и на газету *Русское Слово* (изданія годъ III.) **на годъ безъ различія къ какому бы званію или сословію ни принадлежали**, могутъ пользоваться **значительною уступкой**, уплативъ за оба изданія (ежемесячный журналъ и ежедневную газету) **всего только 16 руб.** (вмѣсто 20) въ годъ. Подписка съ означенною льготой **не разсрачивается** и черезъ **книжные магазины не принимаются.**

Въ этомъ случаѣ слѣдуетъ обращаться (лично или письменно) **исключительно въ одну изъ нашихъ** конторъ:
1) Москва, *Русское Обозрѣніе* (уг. Тверской и М. Гнѣздниковскаго пер., д. Спиридонова).
2) Москва. *Русское Слово* (Страстной бульваръ, д. Перлова.

Годовая подписка на журналъ принимается во всѣхъ лучшихъ книжныхъ магазинахъ, **съ разсрочкой платежа** просятъ адресоваться **исключительно въ контору журнала.**

Книжнымъ магазинамъ и библіотекамъ дѣлается уступка по 50 коп. съ каждаго годоваго экземпляра доставленной подписки.

Книги журнала за всѣ 6 лѣтъ съ его основанія (1890—1895 гг., продаются въ конторѣ редакціи по 5 руб. за годъ За пересылку доплачивается на мѣстѣ по разсчету. Выписывающимъ всѣ шесть лѣтъ—пересылка на счетъ редакціи.

Редакторъ-издатель **АНАТОЛІЙ АЛЕКСАНДРОВЪ.**

Обм. 3—1.

II. Сельско-Хозяйственный иллюстрир. журналъ II.

„ДЕРЕВНЯ“,

(подъ редакціей **Н. Н. Елагина**)

имѣющій задачею распространять практически-полезныя по сельскому хозяйству свѣдѣнія, пригодныя главнымъ образомъ для небольшихъ хозяевъ.

Ученымъ Комитетамъ Министерствъ Народнаго Просвѣщенія и Земледѣлія и Государственныхъ Имуществъ журналъ „ДЕРЕВНЯ“ допущенъ въ библіотеки всѣхъ среднихъ и низшихъ учебныхъ заведеній.

Министерствомъ Народнаго Просвѣщенія журналъ „ДЕРЕВНЯ“ допущенъ въ БЕЗПЛАТНЫЯ НАРОДНЫЯ ЧИТАЛЬНИ.

Программа журнала: отрасли сельскаго хозяйства, ремесла и домоводство.

Безплатныя приложенія: сѣмена хорошихъ сортовъ сельскохозяйственныхъ растеній, планы и чертежи хозяйственныхъ построекъ и рисунки на отдѣльныхъ листахъ.

Срокъ выхода журнала ежемѣсячный, сброшюрованными книжками, съ иллюстраціями въ текстѣ и съ приложеніемъ чертежей и рисунковъ на особыхъ листахъ.

Отзывъ о журналѣ „Деревня“.

Газета „Новое Время“ № 7419—22 Октября 1896 г.: „Въ нынѣшнемъ году былъ сдѣланъ опытъ изданія дешеваго сельско-хозяйственнаго журнала „ДЕРЕВНЯ“. Опытъ вышелъ очень удачный и успѣшный. При цѣнѣ всего **три** рубля съ пересылкой, „ДЕРЕВНЯ“ выходила ежемѣсячно хорошенькими книжками съ множествомъ рисунковъ и хромолитографированныхъ приложеній, исполненныхъ очень хорошо. Содержаніе каждой книжки состояло изъ короткихъ, но дѣльныхъ и ясно написанныхъ статеекъ на самыя разнообразныя темы, но всегда чисто практически излагавшихъ предметъ. Это направленіе намъ кажется очень цѣннымъ для сельско-хозяйственнаго журнала. Многіе изъ деревенскихъ жителей читывали въ книжкахъ и журналахъ и знаютъ, что имъ надо было бы у себя сдѣлать, но какъ бы у себя сдѣлать, но какъ это сдѣлать—тутъ они занимаются на первыхъ же шагахъ и... откладываютъ задуманное до лучшихъ временъ. Помочь имъ перейти отъ словъ къ самому дѣлу—эту задачу и поставилъ себѣ журналъ, насколько можно судить по первому его году. Среди сельскихъ хозяевъ журналъ былъ принятъ, повидимому, очень сочувственно; первыя двѣ книжки его были напечатаны даже вторымъ изданіемъ, и нельзя не сказать, что успѣхъ этотъ—добросовѣстно заслуженный успѣхъ.

Подписная цѣна на журналъ „ДЕРЕВНЯ“: за годъ, 12 выпусковъ со всѣми приложеніями, съ доставкой и пересылкой **ТРИ** руб.

Подписка принимается въ конторѣ журнала: С.-ПЕТЕРБУРГЪ, уголъ Большой Морской и Кирпичнаго переулка, д. 3—13. Въ Москвѣ—въ отдѣленіи конторы, при книжномъ магазинѣ К. И. Тихомирова (Кузнецкій мостъ).

Всѣ сельско-хозяйственныя книги можно выписать наложеннымъ платежомъ.

Адресъ: С.-Петербургъ, контора сельско-хозяйственнаго журнала „ДЕРЕВНЯ“.

Каталогъ высылается безплатно.

Обм. 3-1

Дозв. ценз. Тифлисъ, 15 марта 1897 г. Տպարան Ց. Մարտիրոսեանցի. Тип. И. Мартиросіанца Орбел. ул., № 1—2.